



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի, Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և օրհոգիները):

Յայտարարությունները ընդունվում են ամեն լիցուով:

Յայտարարությունները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿԱՆ ՄԵՆՈՒՄ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ»-ը կարելի է ԹԻՖԼԻՍԻՄՍԻՆԸ:

Օտարաբարակացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցեով՝ Тифлисъ. Редакция «Мшакъ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պէտք է հաւատարիմ մնալ. Պարսից Շահի սպանութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Հայտնի հայ Բարեգործական ընկերութիւնը, Բաշինջաղեանի պատկերահանութիւնը, Մատենադարանը, Նամակ Շամախուց, Նամակ խմբագրութեան, Ներքին լուրեր, —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Վերջին տեղեկութիւններ, Զինուորական կարգադրութիւններ Թիֆլիսից, Նամակ Թիֆլիսից, —ՀԵՌԱՅԻՄՆԵՐ, —ԲՈՐՍՍ, —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ, —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Նարեկ-Ղան Շահ:

ՊԵՏԲ Ե ՀԱՄԱՏԱՐԻՄ ՄՆԱԼ

Մի զարմանալի երևոյթ տեղի ունի մեր կենսային մէջ, որ առիթ է տալիս տխուր խորհրդածութիւններին՝ մեր ինտելիգենցիայի զարգացման վերաբերութեամբ: Մենք ունենք թէ՛ Ռուսաստանի և թէ՛ արտասահմանական բարձրագոյն դպրոցներում բազմաթիւ ուսանողներ, որոնց մի մասը իւրաքանչիւր տարի վերջացնելով իր ուսումը՝ ստանձնում է զանազան պաշտօններ մեր երկրի մէջ:

Սակայն ոչ մի կերպ չէ նկատվում, որ մեր հասարակական գործողները շարունակում են մեծանար և լայնանար տարուց տարու: Բազմաթիւ խնդիրներ մնում են առանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍԻՐ - ԵՒ - ԴԻՆ ՇԱՀ

Թէհրանից եօթ վերստ հեռու գտնվում է մի մեծ և գեղեցիկ քաղաք՝ Ղան, որ զետեղված է հովիտում: Շահ Ղան Ղան Արդու Ղան, կամ Շահաբուդդին անունով ուստատեղի: Գա մի միջին է, այդպէս է թիֆլիսից իմա Վրացի ուղով: Դա միայն, որը ամբողջ թիֆլիսից դարձնում է իմա պարսիկների և մասնատեղիների համար ոչ միայն իրեն ուստատեղի, այլ իրեն բէստ—սպասարան: Ինչ տեսակ յանցանք և գործած լինի մարդ, ինչ նոյն իսկ արքայազան լինի, եթէ նա կարողացաւ գրել իրան Շահաբուդդինի և սպաստանել միջին մէջ, նա ազատված է, որքան ժամանակ մնայ այդ արքայազան չըմբռնուի: Ամեն ուրախ օր, Թէհրանից ղանից Շահաբուդդինի անունը ճանապարհը ծածկվում է ուստատեղիների անաղին բաղմունքով: Երբ մարդ, կին, երեխայ, մօլա, հաջի, ղինուր, բարձրաստիճան պաշտօնեայ,—ամեն մարդ չափ պղծ է աղօթել Շահաբուդդինի դամբարանի վրա և իր հոգեկան ու մարմնական ցանկերն ու տանը ջանքերն ղան ու դարման գտնել: Որ և է ձեռնարկութեան, ճանապարհորդութեան, տօնա-

ուսումնասիրութեան, քննութեան և լուծման: Ամեն տեղ զգացվում է գործողների պաշտօնութիւն և մեր հասարակական շատ գործեր առաջ են տարվում գործողների հին կազմութեամբ, չը կայ նորը, որ նրանց փոխարինելու ոչ թէ ամբողջութեամբ, այլ զեթ մի մասով:

Մեր երկրի վերաբերութեամբ կատարված զիտնական հետազոտութիւնները մէջ կովկասեցիների և մասնաւորապէս հայերի անունը շատ սահմանափակ տեղ է բռնում: Ազգագրական, պատմական, լեզուաբանական և արդիւնագրութեան վերաբերեալ զանազան ծիւղերում դուք կը գտնուէք բազմաթիւ օտարազգիների և ուսանողների անուններ և շատ քիչ կովկասեցիների: Նոյն իսկ Բագուի նման արդիւնագրութեան մի խոշոր կենտրոնում, ուր խմբված են բազմաթիւ մասնագէտներ, բոլոր լուրջ, գիտնական մեծ աշխատութիւնները կատարված են ոչ—կովկասեցիների ձեռքով: Մենք չենք խօսում այլ ևս այն ցաւալի երեւոյթի մասին, որ այդտեղ զանազան բազմաթիւ բարձր ուսում ստացածների ներկայութիւնը՝ մի մասնաշաղկ անգամ չէ բարձրացրել հասարակական կենսային մակերեւոյթը:

Մեր ուսանողութիւնը այդպիսով չէ տալիս այն մասեր և բարոյական դիմաւորող ուժեր, որին տարիներով սպասում է հասարակութիւնը ամենամեծ յոյսերով: Եւ հասարակական կուռք դառնում, մեր մտաւոր զարգացման սպարէզում դուք ինքուր կորուսեք պատասխանատու և ծանր գործերի մէջ համալսարանական երեսասարկներին: Բարոյական անտարբերութիւն, մտաւոր ծուլութիւն, անձնական հանգստութիւն—հայ ինչ որ բնատրոշում է մեր երիտասարդութիւնը: Բացառութիւններ կան ի հարկէ, բայց նրանք այնքան քիչ են, որ նրանց չենք կարող յիշել, երբ մեր առաջ ներկայանում է պատկերը իր տխուր ամբողջութեամբ:

Այդպիսով մեր ուսանողութեան առաջ մի մեծ խնդիր է դրված, որի վրա նրանք պարտաւոր են լուրջ ուշադրութիւն դարձնել: Ուսանողութեան ժամանակ արտասահմանում են գեղեցիկ ձառեր, մեծ—մեծ խոստումներ, տեղի են ունենում ողբերգութիւններ, իսկ կենսային մէջ՝ ոչ մի գործնա-

կատարութեան ժամանակ պարսիկը պարտադիր կերպով պէտք է նախ ուխտի գնայ Շահաբուդդին, յետոյ կատարի իր դիտաւորութիւնը:

Պարսկաստանի ինքնակալ Շահ-Շահ Նասրէդդինը պատրաստվում էր վաղը, ապրիլի 24-ին, տօնել իր յիսնամեայ թագաւորութեան յօբելանսը: Ամբողջ երկրը մեծ պատրաստութիւններ էր տեսնում ուրախանալու պարսից թագաւորների կենսանքում այդ շատ հազուադէպ երեւոյթի առիթով: Շահը, ընդունված սովորութեան համեմատ, ուրախ օր, ամսին 19-ին, ղինուց Շահաբուդդինի աղօթելու իմասն ղամբարանի վրա և աղօթութիւն խնդրելու, բայց ճակատագիրը այնպէս էր անօրինել, որ նա այլ ևս չը վերադառնայ իր պալատը՝ այդ ուստատեղիներից: Բարեկամաբանութիւնը, որոնք դեռ 1852 թիւն փորձեցին սպանել Նասրէդդին Շահին, 34 տարուց յետոյ, 1896 թիւն ապրիլի 19-ին, ցերեկվայ ժամը 12-ին,—ինչպէս գուշում է հեռագիրը,—երազարծեցին իրանց նպատակը մի այնպիսի ժամանակ, երբ ոչ ոքի մտքից չէր անցնում այդպիսի մի դժբաղդութիւն:

Պարսկաստանում մտաւոր մոռացել էին այն աւանդութիւնը և ստաղապետների այն գուշակութիւնը, որի համաձայն Նասրէդդին Շահը պէտք է մեռնէր բուն մահով և մի և նոյն ժամանակ նրանով պէտք է վերջանայ Վերսուի հայրենիքի անկախ գոյութիւնը: Առաջին գուշակութիւնը, դժբաղդաբար, իրադրութիւն, ցանկանք, որ երկ-

կան հետեւեալ, ոչ մի արդիւնք: Ժամանակ է մտածել այդ մասին, ժամանակ է բարեխղճօրէն պատրաստվել կենսային համար և կարողանալ հաւատարիմ մնալ զիտութեան և բարձր զգալիարեւելին:

ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

(Հետագրում)

Թէհրան, ապրիլի 20: Ապրիլի 19-ին, այն ժամանակ, երբ Շահը մտաւ միջինի ներքին, պալատական մասը, որ գտնվում է 6 մղոն հեռաւորութեան վրա Թէհրանից, մի ինչ որ ֆանտոմիկոս ատրճանակ արձակեց Շահի վրա: Շահը իսկույն վախճանվեց: Կարգը կատարեալ է: Թագաւորանքը կը ժամանի Թաւրիզից:

Լ օն դ օն, 21 ապրիլի: Թէհրանից «Times» լրագրին հեռագրում են, որ այնտեղ մի վաղը յուզմունք է նկատվում: Իսկանուլթիւնների խորհրդով, պրինց ֆամէրան-Միրզա-Նաիր Լի-Սալթանէ չէ դուրս գալի պալատից:

Թէհրան, 21 ապրիլի: Մանրամասնութիւնները Շահի սպանութեան մասին: Վիլլիքի և սկեւայի անձինքների ուղեկցութեամբ, Շահը անցաւ ուստատեղիների տեղի դրսի բազուկ արձաններին ողորմութիւն բաժանվեց: Շահը անցաւ նոյնպէս այն շրջանների առաջինից, որոնցով կապված է ներքին բազուկ, յանկարծ մօտեցաւ նրան մարգարտանք և մի քանի քաջ հեռաւորութիւնից արձակեց նրա վրա ատրճանակը: Շահը ընկաւ ծնկաչոք, յետոյ կանգնեց, մի քանի քաջ արաւ և էլ ընկաւ: Մարգարտանքին բռնեցին: Այդպէս զրոյթեան մէջ գտնվող Շահին զրին կառքի մէջ և տարան Թէհրան, պալատը, ուր բժիկները հաստատեցին մահը: Մարմինը բժշկական քննութեան ենթարկելուց յետոյ յայտնվեց, որ քնդակը նստել էր սրտի խոռոչում:

Ապրիլի 20-ին, շաբաթ օր, «Кавказ» լրագրում ստված էր հետեւեալ հեռագիրը: «Այսօր, ապրիլի 19-ին, կէսօրին մօտ, երբ Պարսից Շահը քնացել էր պարսկական սուրբ Աբդու-Ազիմի գերեզմանին երկրպագելու, Նասրէդդին շահ ատրճանակի հարուածով սպանվեց: Ինչ որ արեալայրի բաղկում: Սպանութիւնը գործեց մի բարբառ: Սպա-

նորդը չիւրազորվի:

Կրօնամոլ բարեխնդիր ատրճանակը զրկեց կենսաբնայն մարդուն, որ ամբողջ 50 տարի իր ձեռքում ունէր բուն թագաւոր Պարսկաստանի թագաւոր, որը իր հպատակներից կոչվում էր թագաւոր թագաւորն երի, բարձր, ինչպէս և երկու մոլորակ, տիեզերքի բեւեռ, գիտութեան և արեւի, որի համար արեւը ծագել է իրեն զրոյթի և արի փառքը հաւատար է երկրի փառքին, թագաւոր, որի զօրքերը անհամար են, ինչպէս աստղերը, բաշխի թագերի այն թագաւորների, որոնք իշխում են երկրի գահերի վրա իր թագաւորութեամբ, աշխարհի աղօթարանը, Աստուծու ստուերը (պարսից շահերի սովորական արտգոյնները):

Նասրէդդին Շահը ծնվել է հիւլի 1248 թիւն սպիտակ ամսի 7-ին (1831 թիւն յուլիսի 5-ին), ուրեմն նա 67 տարեկան էր: Նա Վերսուի հարեւր տաճարներից յաջորդն է, իսկ Ղանի բնան հարստութեան չորրորդ զանալայը: Ինչպէս յայտնի է, այդ հարստութեան հիմնադիրն է ալի տա (ներքինի) կոչված Աղա-Մօսամմէդ խանը, Պարսկաստանի աշխարհակալ, բայց և աւանդաւոր ու անգութ շահերից մինը, որը սպանվեց Շառլի բերդում՝ իր երկու սպասաւորների ձեռքով 1797 թիւն: Աղա-Մօսամմէդ-Շահն էր, որ 1795 թիւն հրատարակեց վերջնականապէս Թէհրանը պետութեան մայրաքաղաք, որով-

նորը կաշանաւորված է: Շահ է հրատարակված վալի-Աղա-Մուղաֆար Էլ-Ղան, որը 1858 թիւն պաշտօնապէս զանաժառանգ է յայտարարված և շանաժառ Ռուսաստանի և Անգլիայի կողմից: Նոր Շահը գտնվում է Թաւրիզում, ուր ընդհանուր նահանգապետ էր:

«Թէհրանում գործերը ժամանակաւորապէս կառավարում է մեծ վիզիր Սադր-Աղա: Պարսիկ ժողովուրդը իր յոյսը դնում է Ռուսաստանի օգնութեան վրա՝ զանաժառանգութեան կանոնաւորութիւնը և երկրի ամբողջութիւնը ամեն տեսակ խնդիրներից ազատելու համար»:

Թիֆլիսի պարսկական ընդհանուր հիւպատոսը՝ Միրզա-Ներսիս-Խան Ջաֆարի ստացաւ շաբաթ օր, ապրիլի 20-ին, Թէհրանից, Պարսկաստանի նոր զանալայ Մուղաֆար Էլ-Ղան Շահից հետեւեալ հեռագիրը: «Սարափելի հարուածից յետոյ, որը ինչ մեղանից մեր սիրեցեալ հօրը և որի մասին արդէն տեղեկութիւն ունէք ստացած, մենք թողնում ենք ձեզ ձեր պաշտօնում, դուք կը կատարէք ձեր պարտաւորութիւնները առանց ընդմիջման»:

Թէհրանից, Նասրէդդին Շահի մահվան տխուր լուրը ստանալու առիթով Թիֆլիսի պարսկական ընդհանուր հիւպատոսի մօտ գնացին իրանց ցաւակցութիւնը յայտնելու և կովկասի կառավարչապետը, նրա օգնականը, Թիֆլիսի նահապետը, զանազան հիմնարկութիւնների գլխաւորները, օտար պետութիւնների բոլոր հիւպատոսները, և շատ ուրիշ անձեր:

Վերակի, ապրիլի 21-ին, Թիֆլիսի շխանի միջինում մահմեդական բարձր հոգեւորականութիւնը Նասրէդդին Շահի հոգեհանգիստը կատարեց: Հոգեհանգիստին ներկայ էին՝ պարսից ընդհանուր հիւպատոսը, փոխ-հիւպատոսը և հիւպատոսարանի բոլոր պաշտօնեաները՝ ազադեստ, կովկասի կառավարչապետի ներկայացուցիչները՝ գնդապետ Սոլովիլով և գործաւար Ամօսով, զինաբաշխները, օտար պետութիւնների հիւպատոսները և բազմաթիւ պարսկահպատակներ: Պարսիկների խանութները երկու օր է փակված են ի նշան սուգի:

Հետո զաջարների ցեղը բնակվելով Մաղանդաբանում, կարող էր հարկաւոր ղեկավար չուտով նրանից ստանալ օգնութիւն և պաշտպանութիւն: Նրա մահից յետոյ թագաւորից իր եղբորորդի Բաբա-Խանը, Ֆատ-Ալի-Շահ անունով, 1797 թիւն: Ֆատ-Ալի-Շահի ժառանգը էր հուշակաւոր Աբբաս-Միրզան, Նասրէդդին-Սալթանէն, նա, որ Ներսէս Վ-ի հետ մեծ բանակցութիւններ ունէր և կուրծքի միջոց Ռուսաստանի դէմ, բայց որովհետեւ վախճանվեց դեռ իր հօր կենդանութեան ժամանակ, ուստի թագաւորանք դարձաւ սրա որդի Մահմէդ-Միրզան, որը թագաւորեց Ֆատ-Ալի-Շահի մահից յետոյ 1834 թիւն և իր գահի ժառանգ, կամ վալիահօգ հրատարակեց իր անդրանիկ որդի Նասրէդդին-Միրզային, որը և յաջորդեց հօրը 1848 թիւն: Նասրէդդին-Շահ անունով և միայն 1858 թիւն զանաժառանգ հրատարակեց իր երկրորդ որդի Մուղաֆար-Էլ-Ղան-Միրզային, որ ծնվել էր 1853 թիւն: Թէ ինչ օրհներ է հետեւում այժմեան Պարսկաստանը գահի ժառանգութեան մասին և թէ ինչու միշտ Շահի անդրանիկ զաւակը չէ լինում զանաժառանգ՝ այդ մենք կը բացատրենք յետոյ, առ այժմ պէտք է ասենք, որ Նասրէդդին-Շահի մահվամբ նոր Շահն է Մուղաֆար-Էլ-Ղան վալիահօգ, իսկ զանաժառանգ կը հրատարակի նրա անդրանիկ որդի Մահմէդ-Ալի-Միրզան, որ այժմ մօտ 25 տարեկան է և ապրում է Թաւրիզում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՒՆՆԵՐ ԲԱՐԵՂՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Արարիկ, ապրիլի 21-ին, կայացաւ թիֆլիսի Հայոհեաց Բարեգործական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, որը, թէև նշանակւած էր անցեալ կիրակի, ապրիլի 14-ին, բայց չը կայացաւ, անդամները օրինական թիւի պակասութեան պատճառով:

Այդ ժողովի առիթով հարկաւոր ենք համարում մի քանի տեղեկութիւններ տալ ընկերութեան 1895 թիւ գործունէութեան մասին, օգուտ քաղելով վարչութեան հրատարակած հաշիւը: Առ 1-ին յունվարի 1895 թ. ընկերութիւնը ունեցել է պատրաստ դրամ 14,274 ր. 35 կ.: Տարվայ ընթացքում մուտք եղել է—նուէրներ, անդամակցական վճարներ, տոկոսներ, երեկոյթների արդիւնք, կար ու ձկնի դարձրոյթ—9,020 ր. 19 կ., ուրեմն ընդամենը 23,294 ր. 54 կ.: Մարիք եղել է տարվայ ընթացքում—7,865 ր. 76 կ., մնացորդ առ 1-ն յունվարի 1896 թ.—15,428 ր. 78 կ.: Գլխաւոր ծախսերը եղել են հետեւեալները. 1) ս. Նշան եկեղեցու դպրոցի վրա—2,894 ր. 99 կ. 2) կար ու ձկնի դարձրոյթ վրա—2,632 ր. 6 կ.: Գաւով խոհարարական դպրոցին, պէտք է ասել, որ նա ունեցել է, բոլոր ծախսերը դուրս գալուց յետոյ, դուռն օգուտ—81 ր. 36 կ.:

Պէտք է նկատենք, որ հաշիւը առհասարակ շատ թերի է կազմւած. նա ոչ մի տեղեկութիւն չէ տալիս վարչութեան գործունէութեան մասին, թէ նա քանի նիստ է ունեցել, ինչ հարցեր է քննել և վճռել և այլն: Նշանուէր ոչ մի տեղեկութիւն չը կայ հաշիւի մէջ թէ կար ու ձկնի և խոհարարական դպրոցներում քանի հոգի են սովորում, քանիսն են աւարտել, ինչ դասակարգի կամ հասարակութեան օր խաւերին են պատկանում աւարտողները և այլն: Մեր կարծիքով, որքան հաշիւը մանրամասն լինի, լիակատար, այնքան հասարակութիւնը աւելի շատ միջոց կունենայ ծանօթանալու այնպիսի մի օգտակար ընկերութեան հետ, որպիսին է Հայոհեաց բարեգործական ընկերութիւնը:

Զենք կարող չը նկատել և այն տխուր հանգամանքը, որ թիֆլիսի պէս մի բազմահայ քաղաքում, ընկերութիւնը ունի ընդամենը 176 անդամ: Այդ հանգամանքը պատիւ չէ բերում թիֆլիսի հայոց զեղեցիկ սեռին: Եղած անդամներն էլ այնքան անտարբեր են, որ զանում են մինչև անգամ ընդհանուր ժողով գալ տարին մի անգամ և լսել ընկերութեան գործունէութեան հաշիւը:

Ապրիլի 21-ին կայացած ընդհանուր ժողովը, որին նախագահում էր Արսէն քահանայ Բագրատունի, առաջնորդի յանձնարարութեամբ, հաստատեց 1895 թիւի հաշիւը և վարչութեան կազմած նախահաշիւը 1896 թիւի համար, որից յետոյ տեղի ունեցան վարչութեան 3 անդամի և 4 փոխանդամի ընտրութիւնները: Ընտրվեցին՝

Նաւրէզդին Դահի սպանութիւնը բարեկերի ձեռքով և նոր Դահի, Մուղաֆէր-է-Գիլին գահակալութիւնը կազմում է ոչ միայն մի նշանաւոր, ցնցող դէպք ամբողջ Պարսկաստանի համար, այլ և ներկայացնում է քաղաքական այն խոշոր պատահարներից մինը, որոնք առաջ են բերում ծանր բարդութիւններ արտաքին քաղաքականութեան մէջ:

Առաջարկելով մեր ընթերցողներին Նաւրէզդին Դահի կենսագրութիւնը, մենք կը կամենայինք նախ կանգ առնել նրա գործունէութեան ընդհանուր նկարագրութեան և այն հասնական վնասները, որոնք ի վրայ, որոնք կարող են տեղի ունենալ նոր թագաւորութեան օրով:

Անկասկած, Նաւրէզդին Դահի, ներկայացնելով մեզ պարսկական Դահի ընդհանուր տիպը և յատկութիւնները, Արեւելի մահմետական թագաւորների անասման, ինքնակամ և բռնապետական բնուորութիւնը, ցոյց է տուել և այնպիսի բնաորոշ, յատկանիշ գծեր, մարդատիրական ու կուլտուրական այնպիսի յատկութիւններ, որոնք նրան դարձնում են աչքի ընկնող Պարսկաստանի Դահի մէջ և տալիս են մի նոր կերպարանք, այնպէս որ նրա յիմնական թագաւորութիւնը Պարսկաստանի նորագոյն պատմութեան մէջ պէտք է բուրդովին մի առանձին և բացառիկ գիրք գրաւէ:

Հաստատաւոր կարելի է ասել, որ Պարսկաստանի վերջին հաղթանակայ պատմութեան մէջ,

վարչութեան անդամներ՝ տ. Մ. խաթախան, տ. Ն. խաթախան և օր. Մուղաֆէր, փոխանդամներ՝ տ. Մէլիք-Բախտաբեան, օր. Գորուխանեան, տ. Ն. թախախան և օր. Ն. Սուրուր-Կեանց:

Ի դէպ: Մենք լսեցինք, որ մի անձնաւորութիւն հրաժարվել է ներկայ լինել ժողովին, ասելով՝ չկանայք շատ են խոսում: Ներկայ լինելով ժողովին, մենք կասենք, ընդհանուրով, որ ժողովի միակ պակասութիւնն այն է, որ չկանայք բոլորովին չեն խոսում:

ԲԱՇԽՆԱԳԱՆՆԻ ՊԱՏԿԱՐԱԶՆՈՒԹԻՒՆ

Գործիքների պրոպագանդա վրա, Զուբալովի տանը, լուսանկարչի վերնաշարի պալիլիօնում կախված են քանի հատ մեծ ու փոքր պատկերներ: Մըտնում էք, տեսնում էք, ամեն տեղից ձեզ են նախում ընտելեան սքանչելի տեսարանները: Նրանց մէջ չը կայ միանմանութիւն: Մեծ է ու լայն է ընտելեան գիրքը, յաւիտեան թարմ, դիմիկ նրանով, որ ամեն մի անկիւնում, ամեն մի ծոցում ցոյց է տալիս բազմատեսակ, ինքնուրոյն պատկերներ: Եւ տաղանդը, որին չնորված է անաւոր ընտելիւնը ծուռանելու և մաս-մաս կտաւի վրա անցկացնելու չնորձը, մի չնորձ, որ աւելի հզօր, աւելի զգայուն է, քան գրչի և խօսքի չնորձը, տեսարանների բազմազանութեան առիթ չէ ճնշվել, այլ վրձինի համարձակ չարժու՜նեցող գրել է իրը իր տեղը, համաչափ, ներդաշնակ, կենդանի: Լոյսերը իրանց բազմատեսակ, խորհրդաւոր գոյներով, խտութեան աստիճաններով, տարածման, գունաւորելու խորհուրդներով միանգամայն հպատակվում են այդ վարպետ վրձինին: Ամբողջ իր ծախքով չէ խուսափում կտաւից, օգը, ընտելեան շունչը ներկայ է ամեն տեղ: Եւ այդ է պատճառը, որ զփուարութեամբ էք հեռանում այդ տեսարաններից, տանում էք ձեզ հետ գեղարուեստական մեծ հաճօք, զգում էք, որ ընտելեան վեհ, կաղաւորող, թարմացող ոգուն հաղորդակից էք:

Պի Բաշխնաղանի տաղանդի յատկանիշի մասին նոր ասելու բան չը կայ: Ամենից առաջ հանդուգնալ Գրիգոր Արծրունին էր բնորոշել այդ տաղանդը: Խաղաղ ընտելիւն, տեսարանների անդորրութիւն, այն մօմենտը, երբ չը կայ ոչինչ մի բան, որ խանգարէր երկրի ու երկրի մէջ տիրող հանդարտութիւնը, մի խօսքով այն միջոցը, երբ ընտելիւնը փայլալուծ է սիրտը, դիւթում է միտքը իր հրաշալի, բանաստեղծական հանդարտութեամբ,—այս է այն չըջնալ, ուր Եւրոպայի վրձինը տեսողաբարձում է: Եւ նա հաւատարմի է մնում իր ժամրին: Ուր որ նա յում էք, ամեն տեղ ժպիտ ու մեղմութիւն. ձեր սիրտը չէ յուզվում, այլ սքանչանում է, դուք ձգտում էք դէպի այդ իդէալական հանդարտութիւնը, մարդու երազական այդ տեսլանքը: Նշան իսկ անաւոր սարերի մէջ խորացած Գարիպեան

առաջին անգամն էր, որ այդ երկիրը կարողացաւ ամբողջ կէս դար վարել խաղաղ կեանք, ազատ ներքին երկպառակութիւններից ու խուսափութիւններից, որ այդ երկրի իշխաւոր ժողովուրդը կարողացաւ մի քիչ աղատ շունչ քաշել և վայելել փոքր ի շատե կեանքի, գոյքի և պատուի ապահովութիւն:

Սքանչում մենք չենք կամենում ասել, որ Պարսկաստանը ներկայացնում է մի բարեկարգ, կամայական ու բուսական կամ վարչութիւնից ազատ երկիր, որ երկրի, որտեղ ժողովուրդը պաշտպանված է արդար, ամենքի համար հաւասար օրէնքներով. ոչ, այլ կամենում ենք ասել, որ որքան էլ անբարեկարգ, անապահով լինի Պարսկաստանի և նրա ազգաբնակչութեան այժմեան վիճակը, բայց այդ վիճակը անհամեմատ աւելի երջանիկ և ազատ է, քան եղել է երբ և իցէ, վերջին ժամանակներու:

Այժմ Պարսկաստանում կան զարդեր, մի քանիք նոյն իսկ միջնակարգ և բարձր, կայ հեռագիր, կայ երկաթուղի, ձիաբարձ, կան խճուղիներ, հաստատված են բանկեր, առևտրական ֆիրմաներ, կան գործարաններ, կայ ներքին, միջազգային փոստ, կայ փոքր ի շատե եւրօպական կերպով կազմակերպված դօքը, հրատարակվում են մի քանի լրագիրներ, երկրի արդիւնաբերութիւնը և վաճառականութիւնը բաւական զարգացած է մասնաւոր մի քանի նահանգներում, մի խօսքով երկրի անտեսական, մտաւոր

կերճում գիշերը հանդարտ է, չէ վախճնում, սարսափ չէ պատճառում, այլ անչարժ ու մեղմ կարծես պատմում է զարաւոր զարդերներ: Եւ որովհետեւ լուսնի լոյսը ս. Բաշխնաղանի վրձինը փայլալուծ հրաշալիքն է, ուստի ամեն տեղ, ուր կայ գիշերային լուսատուի հետքը, տպաւորութիւնը դօրեղ է, միանգամայն յափտակող: «Լուսնի ծածկից»—ասում է № 13 պատկերը: Պէտք է տեսնել թէ ինչպէս է այդ տեսարանը անցել կտաւի վրա: Մեծ ծառը, որի ետեւին է լուսնին, երկրի ամպերը, որոնք պահում են ծածկվող լուսնի լոյսը, ստուերները, գետինը այնքան բնական են, որ տեսարանը զմայլեցնում է: Հիւսնայի է նոյնպէս «Գիշերը կտուրի վրա»: Լեռնային տեսարանները (Արագած, Կօջօր, Արաքս-ման, Էջրուտ, Կաղէկ, Արարատ) փոխադրում են ձեզ հակայական քառանկար մէջ, ուր որ և է թուրքի վրա բարձրացած ծառը, յորովող ճանապարհը, սև անդուռը, հեռուի կապուտակութիւնը, ձիւնը, մի խօսքով ամեն մի մանրամասնութիւն հակակցել են տալիս, թէ ինչ է այն գեղեցկութիւնը, որ կարող է տալ աշխարհի երեսին մի միայն սպիւռ:

Պ. Բաշխնաղանի վրձինը բերմուտ է, գիտէ հետեւ ընտելեան, բմբւնել տեղի ու պատկերի բոլոր ինքնուրոյն առանձնայատկութիւնները:— Ուստի կարող ենք սպասել, որ նա նոր և նոր նկարներ կը տալ, որոնք միշտ կը հիացնեն, քանի որ ընտելիւնը երբէք ոչ հնանում է, ոչ պառաւում:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Ա զ գ ա գ ր ա կ ա ն ք ա ր տ է դ ն ե ր », թիֆլիս, 1896.

Աշխարհագրական ընկերութեան կողմակաւ բաժինը այս օրերս լոյս ընծայեց մի ազգագրական ատլաս, որ պարունակում է իր մէջ Աղերկովկասի նահանգների ազգագրական բարեւոյնը և կրում է հետեւեալ վերնագիրը. «Этнографическія карты губерній и областей Закавказскаго края.» Այդ քարտէզների կազմողն է Ե. Կոնդրատենկօ, որ ընկերութեան ներկայ գործավարն է:

Քարտէզները կազմված են վերջին վիճակագրական թուերի հիման վրա, որոնք ժողովված էին զինւորագրութիւն մտցնելու ժամանակ և ստուգվել են մասնաւոր հետազոտութիւններով: Զանազան ազգութիւնների վերաբերեալ թուերը և համեմատական տոկոսները նշանակված են մի առանձին թիւերի վրա, որ կցված է քարտէզներին:

Աղերկովկասի ազգութիւնները նշանակված են քարտէզների վրա առանձին առանձին գոյներով: Օրինակ՝ թիֆլիսի նահանգի ամենամեծ մասը ներկված է կանաչ գոյնով, որ ցոյց է տալիս վրաց ազգաբնակչութեան բուսած տեղերը. իսկ միւս գոյներով նշանակված են հայեր, օսեր,

և ընդհանուր կուլտուրական զարգացման համար այնքան հարկված է ճանապարհը, որ այլ ևս վերադառնալ դէպի յետ, վերագառնալ այն չաբաբատիկ օրերին, երբ Պարսկաստանը կառավարող միակ կամքը—ֆանատիկոս, անասնո՜ւ, անդուստականութեան կամքն էր—անկարելի է: Եւ այդ բոլորի համար Պարսկաստանը պարտական է Նաւրէզդին Դահին, պարտական է և նրա համար, որ նա միայն բոլոր Դահիների մէջ կարողացաւ այնքան սանձաւարել և զսպել հոգեորականութեան կամքը, որ այսօր, նա ինքն, հոգեորականութիւնը, որքան և մեծ ոյժ է ներկայացնում դարձեալ, բայց ստիպված է խոհարարել կուլտուրայի մի քանի պահանջներին առաջ և տեղ տալ նրանց:

Եթէ այդ բոլորի վրա աւելացնենք և այն, որ Նաւրէզդին Դահի բոլոր Դահիների մէջ ամենամարդասէրն էր, քանի ոչ՝ նրա յիմնական երկարատե թագաւորութեան օրով ամենից քիչ արին է թափվել Պարսկաստանում, քան միւս Դահիների կարճատե թագաւորութեան ժամանակ, եթէ ի նկատի ունենանք, որ Նաւրէզդին առաջին Դահի. Կաւա, որ լուրջ հակում ցոյց տուեց դէպի եւրօպական քաղաքակրթութիւնը և ոտնակոխ արեց չարեաթի աւանդական պատուէրը. մտնել մի օտար երկրի միայն իրեն նուաճող— ու մի քանի անգամ ճանապարհորդեց՝ Եւրօպա. եթէ ի նկատի ունենանք, որ կրօնական, ցեղական ու ազգայնական ներողամտութիւնը երկրի

յոյներ, թուրքեր, գերմանացիներ, քիւրդեր և այլն: Աշխարհաքի գաւառը պատած է մեծ մասամբ կապոյտ գոյնով, որ համապատասխանում է հայ երի բնական տեղերին. այդ գաւառի այն մասը, որ սահմանակից է Ալեքսանդրօպօլի գաւառին, ներկված է չերտ-չերտ կարմիր գոյնով, որ համապատասխանում է ուսու գոլթօքներին բնակատեղերին. իսկ այն մասը, որ սահմանակից է Ախալցխայի գաւառին, ունի դեղին գոյն, համապատասխան այդտեղ ապրող թուրք ազգաբնակչութեան: Նոյն թիֆլիսի նահանգի ազգաբնակչութիւնը, բայց բուն աշխարհագրական բաժանումից, ցոյց է տրված և առանձին քառակուսիներով, որով շատ հեշտանում է որոշել ազգաբնակչութիւնների համեմատական բնակչութիւնը նահանգում:

Բացի այդ, մի առանձին մեծ թերթի վրա պատկերացրած է Աղերկովկասի ազգաբնակչութիւնը խոշոր բաժանումներով կրօնական տեսակէտից. այն է՝ ուղղափառ. դաւանութեան պատկանող, հայ լուսաւորչական, մահմետական սիւնիներ, չիաներ և այլն: Մի քանի խոշոր ազգութիւնների վերաբերեալ վիճակագրական թուեր հետեւեալն են:

I. մոնղօլական ցեղ.	1,307,688 անձ
II. վրացի	972,410 >
III. հայեր	939,131 >
IV. իրանական ցեղ.	362,368 >
V. ուսու	122,257 >
VI. յոյն	55,707 >

Ազգագրական ատլասը տպագրվել է իւրեւ յաւելում աշխարհագրական ընկերութեան կողմակաւ բաժնի հրատարակութիւնների XVIII գրքի:

ՆԱՄԱԿ ՇԱՄԱՌՈՒՅ

—

Ապրիլի 15-ին 1893 թ. վերջերում, երբ սիւնդի մի գրութեամբ Շամախու գրադարան-ընթերցարանը ճանաչվեց զուտ ուսումնարանական, այն օրից դըրադարան-ընթերցարանի մուտքը փակվեց հասարակութեան առաջ: Գրադարանը անմատչելի դառնալով, Շամախու հասարակութիւնը գրկվեց իր մտաւոր զարգացման անուղ մատակարարող միակ աղբիւրից:

Այդ օրից սկսած մասնաւոր Շամախու հասարակութեան մէջ օրից օր սկսեց զարգանալ թղթախաղը և ցաւելով պիտի ասենք, որ արդէն սարսափելի կերպարանք է ստացել: Ամենավերջի ծառայողից սկսած մինչև հարուստ վաճառականի ամենամեծ ծառայողը, Շամախու հասարակութիւնը գրկվեց իր մտաւոր զարգացման անուղ մատակարարող միակ աղբիւրից:

Այդ տեսակ դժբաղդութեան առաջն առնելու համար՝ հարկաւոր է հասարակութեան համար

օտարադաւան ազգերի—քրիստոնեաների և հրէաների—վերաբերմամբ, նրա օրով առաջին անգամ ընդունվեց իւրեւ սկզբունք և դաջարեան հարստութեան յատկանիշներից մինը,—այն ժամանակ մենք կը տեսնենք, որ Նաւրէզդին Դահի, արդարեւ, ներկայացնում է մի խոշոր պատմական անձնաւորութիւն, որի մահը, այն էլ բուն մահը, հաւասարապէս պէտք է ողբան թէ պարսկները, թէ հայերը և թէ Պարսկաստանի միւս հպատակ ազգերը:

Գաւով Պարսկաստանի նոր թագաւորին, Մուղաֆէր-է-Գիլին Դահին, մենք առ այժմ կասենք, որ մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն, նոր Դահի, եթէ իր հօր պէս ցոյց չէ տուել կուլտուրական հակումներ և վերամոդիֆիկացի, բայց իր մեղմ, բարի և նոյնպէս մարդասէր բընաւորութեամբ ու ներողամտութեան այն զգացումներով, որ նա արտայայտել է մինչև այժմ, լինելով երկար տարիներ Արաքսականի նահանգի կուսակալ, դէպի հայերը և միւս ազգերը,—տալիս է գրաւական, որ նրա օրով ևս Պարսկաստանը կը վայելի անդորր և խաղաղ կեանք, եթէ միայն զահաժաւանդութեան հարցը և իր առաջ եղբօր՝ Զիլա-սուլթանի զաղտնի դիտաւորութիւնները չը խանգարեն կարգը և խաղաղութիւնը երկրի մէջ:

(Կը շարունակվի)

ՊԱՐԻՉ, 20 ապրիլի: Սոցիալիստական և ար-
մատական պատգամաւորները վճռեցին մի մաս-
նաժողով կազմել՝ Յրանխան գործերու համար
սենատի դէմ: Կը նախագահի Բուրժուա: Մասնա-
ժողովի մէջ կը մտնեն նախկին մինիստրները:
ՊԱՐԻՉ, 20 ապրիլի: Պատգամաւորների ժողո-
ւի նիստերը յետաձգված են մինչև մայիսի 16-ը:
ՊԱՐԻՉ, 20 ապրիլի: 19-ին բանտարե-
րի ոչ մի պատգամաւորութիւն չը գնաց Բուր-
ժուան պալատը: Օրվայ ընթացքում մի բանի
ժողովներ տեղի ունեցան, որոնք, սակայն, ոչ մի
հետաքրքրութիւն չէին ներկայացնում:

ՎԻԵՆՆԱ, 20 ապրիլի: Ապրիլի 19-ին Պրատե-
րում գործադուլ արած բանտարեները անկարգու-
թիւններ արին: Տեղի ունեցան մի քանի ձերբա-
կալութիւններ:

Կ. ՊՈԼԻՍ, 20 ապրիլի: Պետութիւնների առա-
ջագործները՝ Զէյթունի դպրագոյն մասնաժողով-
նչանակելու վերաբերմամբ, Բ. Կուռը պատաս-
խանեց, թէ այդ միջոցը միայն ժամանակաւոր
ընտրութիւն ունի, և թէ առ այժմ անհնարին
է պետութիւնների ցանկութեան կատարելը:

ԼՕՆԻՍ, 20 ապրիլի: Համայնքների ժողովում
կէրդոն յայտնեց, որ այն հարցմունքին, թէ
արդեօք Ռուսաստանը իրաւունք է ձեռք բերել
Չինաստանից Միւրիլի երկաթուղին հասցնել մին-
չև Պորտ-Արտուր, ուստայ կառավարութիւնը
հաղորդեց ըրտանական կառավարութեանը, թէ
գրա մասին խօսք էլ չէ եղել:

ՊԱՐԻՉ, 21 ապրիլի: Ապրիլի 19-ին Պարիզում
հանգիստ անցաւ: Զանազան թաղերում կազմված
բաղմաթիւ ժողովներում ոչինչ ղեկերը տեղի
չունեցան: Հռետորներից չափերը խօսում էին
բանտարեների աշխատանքը ու թէ մամ դարձնելու
մասին: Նշանակներում եւ ոչինչ ղեկերը տեղի
չեն ունեցել:

ԲՈՒԳՆԱՊԵՏ, 21 ապրիլի: Ունգարիայի հա-
ղարամակի տոնախմբութիւնը: Փողոցները չիղ
կեղծով զարդարված են: Յուզահանգիսի բացմանը
հաղորդեցին թագաւորական տան անդամները,
դիւրամատիական կորուստը, ունգարական և
աւստրիական ընկառաւոր անդամները, պետու-
թեան երկու մասերի մինիստրները, աստիճանա-
ւորները, ղեկնարարները և չորս-օֆիցէրները:
11 ժամին ժամանեց թագաւորական զոյգը, որին
հիացմունքով ընդունեցին: Թագաւորը բացված
յայտարարեց յուզահանգիսը:

ԼՕՆԻՍ, 21 ապրիլի: Կենտրոնների արեւելա-
կայսրը նշանակեց պետերաթորեան եպիսկոպո-
սին անդրիական եկեղեցու ներկայացուցիչ թա
դաղարական հանգէսներին Մոսկվայում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍՍԱ

Ապրիլի 19-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . .	94 ր. 30 փ.
Բելլինի վրա 100 մարկ . . .	46 ր. — փ.
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	— ր. — փ.
Ռուսի . . .	արծէ . . . 7 ր. 50 փ.
Մարաշի կուպոններ . . .	149 ր. — փ.
Բորսայի դիվիդենդ . . .	5 ր. 70 փ.
40% պետական ընդհան . . .	987/8 ր. — փ.
50% առաջին փոխաւորութ. . .	285 1/4 ր. — փ.
— երկրորդ . . .	252 ր. — փ.
50% գրաւ. թղթ. աղւ. կալ. բանկի . . .	215 1/2 ր. — փ.
50% պետական երկաթուղ. ընդհան . . .	100 1/2 ր. — փ.
40% ներքին փոխաւորութեան . . .	98 3/8 ր. — փ.
41 1/2% գրաւ. թղթ. աղւ. կալ. բանկի . . .	100 7/8 ր. — փ.
Աղւ. կալ. Պետ. բանկի կապարկութ. . .	— ր. — փ.

41 1/2% վկայակ. գիւղ. հող. բանկի . . .	100 7/8 ր. — փ.
Փոխ. կրեդիտ. ընկեր. միաս. . .	— ր. — փ.
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. . .	— ր. — փ.
ընկերութեան օրիգինալները . . .	101 1/4 ր. — փ.
Մոսկվայի քաղաք. օրիգինալներ . . .	101 1/4 ր. — փ.
Օղէտայի . . .	101 ր. — փ.
Թիֆլիսի . . .	987/8 ր. — փ.
Թիֆլիսի կալ. բանկի 6% . . .	101 ր. — փ.
50% . . .	99 1/2 ր. — փ.
Քաղկեդոնի . . .	60% . . . 101 ր. — փ.
50% . . .	99 1/2 ր. — փ.

Խմբագիր՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՅՅԻԻ

1) ՈՎ ԷՐ ՄԵՐԱՆՈՐ, դեր . . .	20 կոպ.
2) ՊԱՐՈՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ (սակաւաթիւ . . .	20 ր.
Գիւմրէ ԹԻՖԼԻՍ. Զար. Գրքարանցի Կովկա- սեան գրադատանքը և հեղինակի այլիկին . . .	1—2

(№ 46)

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԻՍ
ԲԱՇԽԱՀԱՆԴԻՍ ԵՎԱՐԵՐԻ
Փակ վճար է երեքշաբթի օր, ապրիլի
23-ին: Բաց է առաւօտեան ժամի 10-էջ
մինչև ժամի 7 երեկոյեան: Գործիչների
պրոսպեկտ, տուն Զուբալովի № 8:
(№ 45) 2—2

УЧИТЕЛ
колл. ассессоръ Ив. З. Теръ-Степановъ готовить
учащихся обоего пола въ гимназіи, землемѣр-
ное и др. учебн. завед., на вольноопредѣляю-
щагося, на званіе учителя, бухгалтера и пер-
воклассный чинъ. Большая Банкская ул., д.
№ 3. (№ 42) (2.) 3—3

Լոյս տեսաւ, Մոսկվայում տպագրված
“ՍՈՒԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ”

աղագային լրակատար երկրաւոր առաջին
հատորը՝ ՀՐԻՐՈՐԷ տպագրութեամբ:
Գիրքը բաղկացած է 413 մեծագիր երես-
ներից և պարունակում է իր մէջ՝ բացի բո-
լոր գործածական և ժողովրդին յայտնի եր-
կերից, նոյնպէս ՆՈՐ ԵՐԳԵՐ, ԲԱՆԱՍՏԵՂ-
ՄՈՒԹԻՒՆՆԵՐԻ և երգերին վերաբերեալ ար-
ձակ գրութեան ծրար, թւով 304: Իւրա-
քանչիւր օրինակի գինն է, ճանապարհա-
ծախսով միասին

1 ԲՈՒԲԼԻ 20 ԿՕՊԵԿ
Օտարաբաղաւորացի ցանկացողները, յայտ-
նելով իրանց ճիշդ հասցէն, պէտք է
գրին Բազու, Սոխալի՝ Հրատարակչին,
հետեւեալ հասցեով. Священнику Гри-
горію Григоріанцу, БАКУ.
(№ 44) 3—3

ՄԻՆՈՐԵՆ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ նշանակեալ է աճուրդի 26 և 29 ապր
ապրիլի վան տալոյ ի վարձու զգուշ ԲՅՆԻ հանդերձ Աղայի հողօգէն և փեօթաբլու
անուանեալ արտատաղերեան ինսամեայ ժամանակաւ. ցանկացողը կարեն ի ժամադրեալ
աւուրս ներկայ լինել յԱտենի Արտիկ հանդերձ գրաւականօք:
(№ 44) 3—5 Անդամ Կոնսիստորիայի Համադաստ վարդապետ

ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
(վերաբնութեալ փողոց, տուն № 3.)
ԲԱՅ Է } Առաւօտեան ժամ 9—2, երեկոյեան 5—10
կիրակի և տօն օրերը առաւօտեան 10—2

Տուն տանելու համար արվում են գրքեր և պարբերական հրատարակութիւններ: Վճարը՝ ամսական
20 կոպէկ և 10 կոպէկ: Ընթերցարանի մուտքը 2 կոպէկ. 30 տոմսի արժեքը—40 կ.:
Ստացվում են՝ հայերէն 1) «Մշակ», 2) «Արձագանք», 3) «Նոր-Գար», 4) «Տարազ», 5) «Աղ-
բեր», 6) «Մարտ», 7) «Արեւիկ», 8) «Շաւիղ», 9) «Արարատ», 10) ժողովածուներ:
Ռուսերէն. 1) «Кавказъ», 2) «Новое Обозрѣніе», 3) «Тифлисскій Листокъ», 4) «Русскія
Вѣдомости», 5) «Новости», 6) «Новое Время», 7) «Биржевыя Вѣдомости», 8) «Каспій», 9)
«Иверія», (Վրացերէն), 10) «Русское Боготство», 11) «Русская Мысль», 12) «Новое Слово»,
13) «Вѣстникъ Европы», 14) «Сѣверный Вѣстникъ», 15) «Міръ Божій», 16) «Недѣля».
(№ 31) 8—10



ԳԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ԲԻՍԳՈՒՏՄԱՆԻ
(Տնային գործածութեան համար)

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԱ, այն է հաստատ մահ մկներին, խլուրդներին և ուրիշ կրծողներին:
Այս միջոցը արտաբերում է այդ կենդանիներին զխաւորապէս բնականաբանութիւնը, այնպէս որ նրանք
չեն մնում գետնայարի տակ և չեն տարածում գարշահոտութիւն:
ՄԼԱԿԱՆԻՐ ԳԵՄ ՀՆԳՈՒԿ, ոչնչացնում է նրանց ընդմիջաւ Նա չափ հաճելի հոտ ունի և
բիծ չէ թողնում ձերմակեղէնի, կօշիկների և կարասիքի վրա: Փոշիացնելով նրան, սենեակի օդին
հաճելի թաղանթիւն են հաղորդում և միաժամանակ հաղածում են ցեցը, ճանճը և մոծակները:
ՓՈՇԻՒ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ամենապարտաւոր միջոցն է բոլոր միջատները և նրանց սաղմերը
բոլորին ոչնչացնելու համար: Այդ փոշին անփոխարինելի է լուսեր և մալինը ոչնչացնելու հա-
մար անկողիններում, ներքնալիններում, թաղերով պատած փայտային պատերում: Ոչնչացնելով ցե-
ցը և չունենալով նափթալինի անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փոխարինում է նրան. դրա
համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մուշտակները և ուրիշ մօրթեղէն իրերը պահելու
համար: Փոշու աղբեղութիւնը, երբ նրան գործադրում են ամեն տեսակ միջատների, մրջկանների
դէմ—գրեթէ վայրկեանական է—հետեւանքը զարմանալի:
(№ 23) 8—50

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ
Լուսանկար ՏԵՐ-ՂԱՆԴԵԱՆԻ մօտ վաճառվում են հետեւեալ հայ գործիչների պատկերները՝
Հոգեարականներ. —Հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ և ՄԵՍՐՈՊԻ: Ժամանակակիցնե-
րից՝ ՆԵՐՍԵՍ V, ԳԵՈՐԴ IV, ՄԱԿԱՐ և ՄԻԿՏԻԶ կաթողիկոսների, ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷԱՔԱՆԵՍԻ (Կա-
թողիկոս Կիլիկիայի), ՄԱՏԻՔԻՍ ՊԱՏՐԻԱՐԿ ԷԶՄԻԱՇՆԻ, ԱՐԻՍՏԱԿԵՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՒՐԱ-
ԿԵՆԵՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐԳԵՏԻ և ուրիշ արժանաւոր հոգեարականներին:
Նոյն տեղը վաճառվում են. —ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ, ԲԱՅԻԻ, ՌԱՖԱԵԼ ՊԱՏԿԱ-
ՆԵՆԱՆԻ, ԵՐԵՆԵՅԻ, ՍՏԵՓԱՆԵՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆԵՅԻ, Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Պ. ԱՐԱՍԵԱՆԻ (բոլոր դերերում
նկարված), ԽԱՐԱԳԻՐՆԵՐԻ, կենդանի ԳՐՈՂՆԵՐԻ, նշանաւոր հայ ԿԱՆԱՆՏ՝ Ս. ՏԻՒԱՐԻ, ՄԱՐԻԱՄ
ՄԷԼԻԲ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐՄԵՐՈՒՆԻ, «ՄՇԱԿԻ» ԱՇԽԱՏԱԿԻՅՆԵՐԻ յօրեկանական ալբոմը, նմանապէս
և ուրիշ զանազան գործիչների լուսանկարները:
Վերջեւեալ պատկերները արժեն՝ մեծագիր 3 բուրքի, ՄԻՋԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 բուրքի, ԿԱ-
ԲԻՆԵՍԱՅԻՆ կաշված պատկերները՝ 40 կոպէկ, ՎԻՋԻՏ կաշված պատկերները՝ 20 կոպէկ:
Հասցէն՝ ТИФЛИСЬ Фотография Теръ-Гевондянца (На Михайловск. мосту). ճանապարհա-
ծախսը գնողի վրա է:
(№ 117) 8—10

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ
91-ն փետրվարի 1896

Պ Ա Հ Ա Ն Զ Ք	Թիֆլիսում	Բաթիններում	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բաթիններում	Ընդամենը
1. Գրամարկ (առձեռն թղթադրամ).....	221,174—42	223,818—65	444,993—07	1. Հիմնական դրամադրու (5000 բաժին- տոմսեր, 200 բուրք)	1,000,000 —	—	1,000,000 —
2. Ինքնացի հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	410,308—88	1,484,100 —	1,894,408—88	2. Առաջին վճար բաժնետոմսերի 3-րդ շրջ.	500,000 }	—	506,800 —
3. Զեղջ. (Disconto) մուրհ. երկու տարադրութ.	3,282,655—98	1,116,905—04	4,399,561—02	3. Երկրորդ . . .	6,800 }	—	638,535—89
4. Զեղջ. մուրհ. մի տար. ապահ. տոկոս. թղթ.	377,999—86	—	377,999—86	4. Պահաւոր դրամադրութ.	638,535—89	—	2,499—33
5. Զեղջ. մուրհ. մի տար. ապահ. տոկոս. և այլն.	35,477—28	16,236—25	51,713—53	5. Գրամադրու չիլուց. անշարժ կալուածքի.	—	2,499—33	—
6. Փոխաւորութիւն գրաւականով	—	—	—	6. Գրամական աւանդներ՝	—	—	—
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաւ. թղթերի.	1,300,255—31	589,311—12	1,889,566—43	ա) Պայմանաւորութիւն	4,643,841—56	1,794,979 —	6,438,820—56
բ)	358,861 —	5,750 —	364,611 —	բ) ԳՊահանջ	270,166 —	154,267 —	424,433 —
գ) Ապրանքների	—	832,509—34	832,509—34	գ) Ընթացիկ հաշուով հասարակ.	1,364,866—50	1,933,394—83	3,298,261—33
դ) Ոսկու և արծաթի	—	4,764—23	4,764—23	դ)	—	217,837—57	217,837—57
7. Բանկի պատկանեալ տոկոսաւոր թղթեր.	1,519,385—38	166,416—92	1,685,802—30	7. Թղթակիցներ՝	—	—	—
8. Ոսկի և արտասահման փոխանակագրեր. .	202,687—80	33,515—70	236,203—50	ա) Նոցա հաշիւը (Loro).....	1,399,964—89	—	1,399,964—89
9. Տոկոսաւոր թղթեր պահաւոր դրամադրութ. .	—	—	—	բ) Բանկի հաշիւը (Nostro).....	3,188,750—79	—	3,188,750—79
10. Թղթակիցներ՝	—	—	—	8. Բաժնիների հաշիւը կենտ. վարչութ. հետ.	—	2,038,024—13	2,038,024—13
ա) Նոցա հաշիւը (Loro).....	1,601,790—91	—	1,601,790—91	կենտրոն. վարչութ. հաշիւը բաժին. հետ.	1,811,537—08	—	1,811,537—08
բ) Բանկի հաշիւը (Nostro).....	3,929,564—45	—	3,929,564—45	9. Բանկի բաժնետոմսերի անվճար կտրոն- ների բաշիւը	3,589—46	—	3,589—46
11. Բաժնիների հաշիւը կենտ. վարչ. հետ. . .	1,869,964—25	—	1,869,964—25	10. Չը վճարուած տոկոսներ, աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողու- թեանց	94,011—19	37,798 —	131,809—19
կենտրոնական վարչութեան հաշիւը բա- ժնիների հետ	—	1,793,627—42	1,793,627—42	11. Ստացուած տոկոսներ և յանձնարարա- կաններ	76,293—29	32,659—12	108,952—41
12. Գնումն և վաճառ. արժեթղթի ըստ յանձնար.	89,250 —	—	89,250 —	12. Փոխանցիկ գումարներ.	99,896—38	81,110—87	181,007—25
13. Պայմանաւորման անցուցած փոխաւորութիւն.	28,666 —	16,290 —	44,956 —	13. Արդիւնք 1895 թ.	156,100—64	67,697—48	223,798—12
14. Բողոքված մուրհակներ.	3,850 —	—	3,850 —	ԲԱՅ	15,254,353—67	6,360,267—33	21,614,621 —
15. Ընթացիկ ծախսեր.	12,525 50	11,090—42	23,615—92				
16. Կահաւարաւոր և սկզբնական ծախսեր. . .	2,848—10	6,520—83	9,368—93				
17. Յետ ստացուելիք ծախսեր.	7,088—55	8,633—59	15,722—14				
18. Անշարժ կալուածք.	—	50,777—82	50,777—82				
ԲԱՅ	15,254,353—67	6,360,267—33	21,614,621 —				